Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
16/02/2011թ թիվ 28-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«28» փետրվարի 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-029

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՄԲ ՕԺՏՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2011

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) պետք է սույն կանոնների Հավելված 1-ի աղյուսակում նշված տարածքներում ունենա ապահովագրական հատուցումների գործընթացի կարգավորման իրավասությամբ օժտված առնվազն Հավելված 1-ով սահմանված թվաքանակով ներկայացուցիչներ, ովքեր միայնակ կամ ընկերության՝ իրենց հատկացված տարածաշրջանին ամրակցված այլ ներկայացուցիչների հետ պարտավոր են իրենց հատկացված տարածաշրջանում ապահովել տվյալ ընկերության կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով տեղի ունեցած ապահովագրական պատահարների սպասարկումը՝ մասնավորապես պատահարների գրանցումը, դեպքի վայր ժամանումը, տուժողներից, նրանց ներկայացուցիչներից կամ իրավահաջորդներից փաստաթղթերի ընդունումը և գլխամասային գրասենյակին փոխանցումը, տուժողներին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը, Բյուրոյին հասցեագրված դիմումների և դրանց հետ կապված փաստաթղթերի ընդունումը և փոխանցումը գլխամասային գրասենյակ և Բյուրո, ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից հատուցումների վճարման գործընթացի աջակցությունը:

2. Սույն կանոնների 1-ին կետով նախատեսված ապահովագրական հատուցումների գործընթացի կարգավորման իրավասությամբ օժտված ներկայացուցիչները պետք է ունենան փաստացի և մշտական գործունեության վայր իրենց ամրակցված տարածաշրջանում, շուրջօրյա հասանելիությամբ բջջային հեռախոսակապ, ինչպես նաև էլեկտրոնային փոստ:

3. Յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն պետք է Հավելված 1-ով սահմանված աղյուսակում նշված մարզերում ապահովագրական հատուցումների գործընթացի կարգավորման իրավասությամբ օժտված իր ներկայացուցիչների բաշխումն իրականացնի այնպես, որպեսզի գործնականում օբյեկտիվորեն հնարավոր լինի ԱՊՊԱ պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետներում ապահովելու ապահովագրական ընկերության ներկայացուցչի պատահարի վայր ժամանումը, ինչպես նաև ապահովագրական հատուցումների գործընթացի պատշաճ կարգավորումը:

4. Ապահովագրական ընկերությունները իրենց անունից հանդես եկող ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական հատուցումների գործընթացի կարգավորման իրավասու-թյուններով օժտված ներկայացուցիչների ցանկը Բյուրո են ներկայացնում սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ցանկի յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում՝ փոփոխությունները և (կամ) լրացումները տեղի ունենալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Ապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական հատուցումների գործընթացի կարգավորման իրավասություններով օժտված ներկայացուցիչների ցանկը Բյուրո են ներկայացնում Հավելված 2-ով սահմանված ձևով:

Հավելված 1
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
16/02/2011 թ թիվ 28-Լ որոշմամբ հաստատված RL 1-029 կանոնների

ԲՅՈՒՐՈՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ

Մարզեր	Ներկայացուցիչների նվազագույն քանակը
Արագածոտն	1
Արարատ	1
Արմավիր	1
Գեղարքունիք	1
Լոռի	2
Կոտայք	1
Շիրակ	2
Սյունիք	3
Վայոց ձոր	1
Տավուշ	1
ԼՂՀ	2

Հավելված 2
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
16/02/2011 թ թիվ 28-Լ որոշմամբ հաստատված RL 1-029 կանոնների

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԱՆԿ

Քաղաք	Սպասարկող տարածաշրջաններ (ներառյալ դրանց հարակից համայնքները)	Անվանում (անուն, ազգանուն)	Գործունեության վայրը (փաստացի գտնվելու հասցեն)	Հեռախոսա-համար (բջջային)	Էլ. փոստ
…					
…					
…					